

ԿԱՐԾԻՔ

ՏԻԳՐԱՆ ԼԵՈՆԻԴԻ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՆՈՐԱՀԱՅՏ ԱՐԱԲԱՏԱՌ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ (XII-XIX ԴԴ.)» Է.00.05 «ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆ, ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՊԱՏՄԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Վիճակագիր արձանագրությունները կարևորագույն սկզբնաղբյուրներ են Հայաստանի, ինչպես նաև ողջ տարածաշրջանի միջնադարյան և նոր շրջանի պատմության ուսումնասիրման համար: Հայաստանի տարածքում հայերեն արձանագրությունների ուսումնասիրությունը սկսվել է դեռևս XIX դարում: Հայ թե օտար բազմաթիվ գիտնականներ մեծ ուշադրություն են դարձրել այս բնագավառին և պատահական չէ, որ հրատարակվել է մի ամբողջ մատենաշար՝ «Դիվան հայ վիճակագրության» իր մեկ տասնյակից ավելի պրակներով: Նույնը չի կարելի ասել այլալեզու՝ մանավանդ արաբատառ արձանագրությունների մասին, թեև արաբատառ արձանագրությունների հանդեպ ևս հետաքրքրությունը ծագում է XIX դարից, հատկապես շնորհիվ Հայր Ղևոնդ Ալիշանի ջանքերի: Ապա հետազոտության այդ ճյուղում իրենց ներդրումն են ունենում ականավոր գիտնականներ Նիկողայոս Մառը, Վասիլի Բարտոլոյը, Մաքս վան Բերշեմը և ուրիշներ: Այնուամենայնիվ կարելի է ասել, որ Հայաստանի արաբատառ արձանագրությունների համապարփակ և համակարգված ուսումնասիրությունները սկսվել են 20-րդ դարի 60-70-ական թվականներին շնորհիվ Հակոբ Փափազյանի, Արամ Տեր-Ղևոնդյանի և Ալեքսանդր Խաչատրյանի վերծանումների և արժեքավոր հոդված-ուսումնասիրությունների: Այս շրջանում խնդրո առարկա բնագավառում ամփոփիչ և խիստ գնահատելի աշխատանք է Ալեքսանդր Խաչատրյանի «Դիվան Հայաստանի արաբերեն վիճակագրության, VIII-XVI դդ., պրակ Ա» ռուսերենով հրատարակած ծավալուն հատորը, որը լույս տեսավ 1987 թվականին: Տիգրան Միքայելյանի սույն ատենախոսության համար հենց Ալեքսանդր Խաչատրյանի վերոհիշյալ աշխատանքն է, որ ծառայել է որպես օրինակ և ուղենիշ: Միաժամանակ, վերոհիշյալ աշխատանքի հրատարակությունից գրեթե 40 տարի անց ներկայացվող ատենախոսությունը իր մեջ պարունակում է նորույթ և գիտական հետաքրքրություն հետևյալ չորս պատճառներով.

ա) Ժամանակային սահմանների մեջ ընդգրկվել է լրացուցիչ 300 տարի (XVI դարից հասցնելով մինչև XIX դարը):

բ) Ատենախոսությունը վերաբերում է ոչ միայն արաբերեն, այլև բոլոր արաբատառ (արաբերեն, պարսկերեն, թյուրքերեն/օսմաներեն) արձանագրություններին,

գ) Ներառված են (վերձանությամբ ու թարգմանությամբ) վերջին 40 տարվա ընթացքում հայտնաբերված նոր արձանագրությունները,

դ) Բացի վիճաբար արձանագրություններից ընթերցված, վերձանված ու թարգմանված են նաև խեցեղենի, ապակու և մետաղյա առարկաների վրա գրանցված արձանագրությունները:

Ատենախոսությունը գրելիս հեղինակն օգտվել է բավականաչափ հարուստ գրականությունից և սկզբնաղբյուրներից՝ փորձելով հարցն ուսումնասիրել հնարավորինս համակողմանիորեն: Աշխատանքի աշխատանքի նպատակն ու խնդիրները ձևակերպված են բավականաչափ հստակ:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, գրականության ցանկից, նկարների հավելվածից, ռուսերեն և անգլերեն լեզուներով ամփոփումներից:

Առաջին գլխում ատենախոսը անդրադառնում է հարցի ուսումնասիրման պատմությանը, այնուհետև ծավալուն անդրադարձ ունենում մուսուլմանական տարրի ներթափանցմանը Հայաստանի տարածք, մուսուլմանական հուշարձաններին և դրանց հետ սերտորեն կապված արաբատառ արձանագրություններին: Այս բաժինը մեծ կարևորություն է ներկայացնում, քանի որ ցույց է տալիս պատմական հիմքն ու իրերահաջորդ արշավանքներն ու տարբեր մուսուլմանական կազմավորումների տիրապետությունը Հայաստանում, որի հիմքի վրա Հայաստանում հայտնվում են արաբատառ արձանագրություններ: Այդ առումով բնականաբար առաջին փուլը ներկայացնում է VIII դարի վերջին քառորդում Հայաստանի տարբեր մասերում առաջին անգամ հաստատված արաբական ցեղերը և ապա ձևավորված արաբական ամիրությունները, որոնք ստեղծվելով Աբբասյան խալիֆայության տիրապետության ներքո՝ գոյատևեցին նաև Բագրատունյաց Հայաստանի գրեթե ողջ ընթացքում:

Հաջորդ կարևոր փուլը մուսուլմանների Հայաստան ներթափանցման համար անկասկած քրդական ծագում ունեցող Շադդադյանների տոհմն էր, որը Բագրատունիների թուլացման և սելջուկների առաջին արշավանքների ժամանակ հաստատվեցին Մեծ Հայքի երեք կարևորագույն կենտրոններում՝ Գանձակում, Դվինում և Անիում: Վերջին երկու մեծ կենտրոններում նրանք գոյատևեցին մինչև XII դարի վերջը, երբ Ջաքարյան իշխանները հայվրացական զորքերի գլուխ անցած նվաճեցին այդ քաղաքներն ու մերձակա հողերն ու միացրին Վրացական թագավորությանը: Այս փուլի պատմական և մշակութային դերը շատ կարևոր է ներկա ատենախոսության համար, քանի որ «Շադդադյան դարաշրջան»-ի արձանագրություններով է սկսվում ներկա ուսումնասիրությունը: Բացի այդ, հատկապես Դվինի վերջին տասնամյակների հնագիտական պեղումները, որոնց ընթացքում առատ նյութ է հայտնաբերվել հենց այդ դարաշրջանին վերագրվող, ցույց է տալիս սույն պատմափուլի կարևորությունը: Ապա հաջորդում են մոնղոլական արշավանքները, թուրքմենական ցեղերի, ապա նաև Սեֆյան Իրանի տիրապետության շրջանը Արևելյան Հայաստանում: Չմոռանանք նշել նաև պարսկերեն և արաբերեն-պարսկերեն արձանագրությունների առատությունը՝ մի բան, որ հատուկ է ոչ միայն Սեֆյան դարաշրջանին, այլև դրան նախորդած սելջուկյան, մոնղոլական և թուրքմենական տիրապետության փուլին, երբ պարսկերենը կատարում էր պաշտոնական լեզվի դեր:

Ատենախոսության երկրորդ գլխում ներկայացվում են նոր ընթերցված արաբատառ արձանագրությունները ըստ դրանց աշխարհագրության՝ Երևան, Սյունիք, Վայոց Ձոր, Գեղարքունիք, Կոտայք, Արագածոտնի մարզ: Միևնույն ժամանակ յուրաքանչյուր մարզի պարագայում արձանագրությունները դասակարգված են ըստ իրենց բնույթի՝ օրինակ ա) շինարարական արձանագրություններ, բ) հիշատակային արձանագրություններ, գ) տապանագրեր և այլն:

Երկրորդ գլխի վերջին ենթագլուխը վերնագրված է «Նոր ընթերցված արձանագրությունների հնագրագիտությունը»: Սա ատենախոսության արժեքավոր բաժիններից մեկն է, որտեղ փորձ է արվում ըստ գրատեսակների՝ *քուֆի, նասի, սուլուս, մուհակկակ, նասթաալիկ* և այլն, դասակարգել Հայաստանում հայտնաբերված արձանագրությունները:

Վերջապես երրորդ գլուխն ամբողջությամբ նվիրված է ոչ վիմագիր, այլ խեցեղենի, ապակու և մետաղի վրա ընթերցված արաբատառ գրություններին: Սա ատենախոսության առավել ինքնուրույն և արժեքավոր բաժիններից է, որի վերջին ենթագլուխը նույնպես նվիրված է այդ արձանագրությունների հնագրագիտությանը:

Ատենախոսությունն ունի միջգիտակարգային բնույթ: Այն իր մեջ ներառում է ոչ միայն պատմագիտական և աղբյուրագիտական, այլև հնագիտական առատ նյութ: Միաժամանակ, ատենախոսը լայն անդրադարձ է ունեցել հնագրագիտությանը: Դրվատանքի է արժանի նաև մեծածավալ դաշտային աշխատանքը և արձանագրությունների բարդ, երբեմն չափազանց խրթին (հաճախ անընթեռնելի) լեզուն վերծանելու հեղինակի կարողությունները: Գովելի է նաև ոչ միայն արաբերեն, այլև ողջ արաբատառ նյութը ընդգրկելու ձգտումը:

S. Միքայելյանի ատենախոսության վերաբերյալ իմ դրական կարծիքի հետ մեկտեղ ներկայացնում եմ նաև մի քանի դիտողություններ:

- Ատենախոսության վերաբերյալ մեր գլխավոր դիտողությունը հետևյալն է՝ համոզիչ կերպով չեն բացատրվում ժամանակային սահմանները, այն է՝ XII-XIX դարեր: Եթե սկիզբը այսինքն XII դարը կարելի է կապել Անիի և Դվինի Շադդադյանների հետ, ապա վերջը հստակ չէ, քանի որ Հայաստանում հաստատված տարբեր մուսուլմանական ցեղերի ու համայնքների թողած արաբատառ արձանագրությունների հանդիպում ենք ոչ միայն ռուսական տիրապետությունից մի քանի տասնամյակ անց, այլև ընդհուպ մինչև 20-րդ դարի 20-ական թվականների առաջին կեսը: Այս առումով XIX դարի վերջի և XX դարի առաջին քառորդի միջև էական տարբերություն չկա, հատկապես եթե խոսքը վերաբերում է տապանաքարերին:
- Էջ 23 և այլուր – Սեբեոսի, Ղևոնդի, Մովսես Կաղանկատվացու, Թովմա Արծրունու և մինչև 12-րդ դարի բոլոր հայ պատմիչների երկերը ցանկալի է հղել «Մատենագիրք Հայոց» մատենաշարից, քանի որ այդտեղ ներառված են քննական կամ համեմատական բնագրեր և հատորները ընդգրկում են նորագույն հետազոտությունները: Ինչ վերաբերում է Սամվել Անեցու ժամանակագրությանը, որը դեռևս չի մտել վերոհիշյալ մատենաշարի մեջ, ապա պետք է օգտագործել հետևյալ քննական բնագիրը՝ *Մամուկ*

Անեցի եւ Շարունակողներ, Ժամանակագրութիւն Ադամից մինչև 1776 թ., Աշխատասիրությամբ Կարեն Մաթևոսյանի, Երևան, 2014:

- Էջ 7 և 24 – ալ-Մուկադդասիի, Իբն Հաուկալի և մի շարք այլ հեղինակների երկերից օգտվելիս կարելի է հղել նաև «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին» շարքի 16-րդ հատորը (արաբական աղբյուրների Գ հատորը)՝ Արաբ մատենագիրներ, Թ-Ժ դարեր, Արամ Տեր-Ղևոնդյանի աշխատասիրությամբ, հրատարակված 2005-ին: Նույնը վերաբերում է Յակուբի, Բալագուրի և 9-10-րդ դարերի այլ պատմիչ-աշխարհագրագետների երկերին:
- Ատենախոսության մեջ *Քուֆի*, *Նասիս* և այլն հիմնականում հիշատակվում են որպես գրատեսակներ, բայց 1-2 տեղ էլ նշվում է որպես տառատեսակ: Անհրաժեշտ է միօրինակություն:
- Էջ 34 – Այստեղ և այլուր երբ հիշվում է ասորական պատմագրության մասին, մասնավորապես Միքայել Ասորի պատմիչի մասին՝ հղվում է նրա «Ժամանակագրության» հայերեն երուսաղեմյան երկու հրատարակություններից մեկը՝ այնպիսի տպավորություն է ստեղծվում, որ այն ասորական բնագրի ճշգրիտ թարգմանությունն է, մինչդեռ ինչպես հայտնի է հայերենով գրվածը շատ ավելի համառոտ է, փաստացի ինքնուրույն երկ է, ամենայն հավանականությամբ կապվում է Վարդան Արևելցու անվան հետ և ավելի շատ կապված է հայ պատմագրության, քան ասորականի հետ: Իհարկե այն կարող է արժեքավոր աղբյուր հանդիսանալ, բայց եթե խոսում ենք Միքայել Ասորու բուն գործի մասին, ապա դա կարող է լինել ասորերեն (շատ ավելի ծավալուն) բնագիրը, կամ նրա ճշգրիտ թարգմանությունը օրինակ ֆրանսերենով (*Chronique de Michel le Syrien, ed. Et tr. Par J.-B. Chabot, t.I-III, Bruxelles, 1963*) կամ որևէ այլ լեզվով:
- Էջ 108, տող 12 և այլուր – «շիական», թեև որոշ արևելագետներ նախընտրում են այդ ձևը, բայց մեր կարծիքով պետք է լինի «շիայական» կամ «շիա ուղղության», քանի որ եթե -ական վերջածանցը հանում ենք մտում է «շի», որտեղ արաբերենի «այն»-ը որևէ ձևով չի արտահայտվում և բառն աղավաղվում է:
- Էջ 66, 15-րդ տող – պարսկերեն արձանագրության մեջ կա նաև «Ռում» բառը, որը թարգմանության մեջ բաց է թողնվել: Ատենախոսության մեջ նշված է «...Եգիպտոսն ու

Չինաստանը կլինեն քոնը», պետք է լինի «Եգիպտոսը, Ռուսն ու Չինաստանը կլինեն քոնը»:

- Էջ 33, ծնթգր. 156 – Եթե հղվում է Իբն ալ-Ասիրի «ալ-Քամիլ ֆի թ-թարիխ» նշանավոր երկը, ապա մեր կարծիքով հայերեն հատվածական թարգմանության հետ մեկտեղ, կամ դրանից էլ առաջ, անհրաժեշտ է հղել արաբերեն բնագրի որևէ հրատարակություն, էջ 34 – Միքայել Ատտալիատեսի երկը ևս պետք է հղել ոչ միայն Հ. Բարթիկյանի թարգմանությամբ, այլև հղելով հունարեն բնագիրը:
- Էջ 15-16 – մեր կարծիքով ճիշտ չէ օտար հետազոտողների ուսումնասիրությունները մեջբերել հղելով Ալեքսանդր Խաչատրյանի գիրքը: Էջ 66, 1-3 տողերում՝ «Ըստ Իբն Բատուտայի և Մարկո Պոլոյի վկայությունների՝ Փոքր Ասիայի քաղաքներում գոյություն ունեին խառը՝ քրիստոնյա-մուսուլմանական այդպիսի սաոցիալացիաներ», որից հետո փոխանակ այդ հեղինակներին հղելու, կրկին հղվում է Ա.Խաչատրյանի գիրքը:
- Էջ 30, տող 13 – «Պետք է նշել, որ Աստղիկը օգտվել է Վարդան Մարկավագի այժմ կորաված երկից», հղումը՝ *V.Minorsky, Studies in Caucasian History*: Ճիշտ կլինեք առաջին հերթին հղել Աստղիկի երկը, ապա միայն այլ հեղինակների:
- Էջ 92, տող 19-20 – «սակայն Ա.Խաչատրյանը այն համարում է XVI դարի ստեղծագործություն»: Այս նախադասությունից հետո որևէ հղում չկա:
- Ատենախոսության մեջ հանդիպում են մի շարք կրկնություններ, իսկ օրինակ «Թաքիա» բառը բացատրված է երեք անգամ:
- Էջ 28, 9-րդ տող, էջ 44-ի 16-րդ տող և այլուր «մուսուլման» բառի փոխարեն օգտագործվում է «մուսուլմանական» (անձի իմաստով) և «մուսուլմանականություն» ձևերը:
- Էջ 78, 18-րդ տող – «Հայ Մեծ թվական», ընդունված է «Հայոց Մեծ թվական»:
- Էջ 10-ի տողատակում կա տեխնիկական թերություն, հղումների մի մասը շատ մանր տառերով են:
- Էջ 126, 14-րդ տող – «ինվենտարային համար» պետք է լինի «գույքահամար»:
- Բավական մեծ թիվ են կազմում վրիպակները (Էջ 3, տող 16 - ...վիմագրություն, պետք է լինի «վիմագրության», էջ 5, տող 27 - ...պատմությանը, պետք է լինի «պատմությունը»,

Էջ 16, 2-3 տողեր - ...սկսվել են զբաղվել, պետք է լինի «սկսել են զբաղվել», ինպիսիք են, պետք է լինի «ինչպիսիք են», Էջ 79 – վերջին տողում բաց է թողնված «դար» բառը, Էջ 80 – առաջին տողում վրիպակով է գրված «տապանաքար» բառը):

- Աշխատանքն ընդհանուր առմամբ խմբագրման ու սրբագրման կարիք ունի, մանավանդ եթե որոշվի այն հրատարակել որպես մենագրություն:

Նշված թերությունները, սակայն, չեն նսեմացնում արված մեծածավալ աշխատանքը:

Տիգրան Լեոնիդի Միքայելյանի «Հայաստանի հանրապետության տարածքի նորահայտ արաբատառ արձանագրությունները սոցիալ-մշակութային և պատմական համատեքստում (XII-XIX դդ.)» Է.00.05 «Պատմագրություն, աղբյուրագիտություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը համապատասխանում է «Հայաստանի հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգ»-ին, իսկ նրա հեղինակն արժանի է իր հայցած պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս

Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի ավագ գիտաշխատող, պատմական գիտությունների դոկտոր

Վահան Արամի Տեր-Ղևոնդյան

14. 02. 2026



Պ.գ.դ. Վ.Ա.Տեր-Ղևոնդյանի ստորագրությունը հաստատում եմ՝
Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի գիտքարտուղար,

պ.գ.թ. Վահե Թորոսյան

